



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

#### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

18 մարտի 2021թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝

Ա. Վաղարշյանի

Է. Շաթիրյանի

Քննության առնելով Կարինե Առաքելյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Կարինե Առաքելյանը 2021 թվականի փետրվարի 17-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«... Թիվ ԿԴ2/0069/01/16 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2021թ. հունվարի 26-ի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման մեջ կիրառած ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998թ. հուլիսի 01-ին ընդունած և 1999թ. հունվարի 12-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ. մարտի 23-ին ընդունած և 2018թ. ապրիլի 08-ին

ուժի մեջ մտած թիվ ՀՕ-211-Ն օրենքի փոփոխություններով 414.3-րդ (ըստ Օրենսգրքի՝ 414<sup>3</sup>-րդ) հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներին հակասող»:

2. Ըստ դիմողի՝ Օրենսգրքի 414<sup>3</sup>-րդ հոդվածի անորոշությունով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանի կողմից սույն հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված» և «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը» նախադասությունները յուրովի է ընկալվել, և վերջինս գտել է, որ վճռաբեկ բողոքում եղած բազմաթիվ հիմքերի բացակայությունը չպետք է հիմնավորի, իսկ 2021թ. հունվարի 26-ի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումն էլ ընդհանրապես չպետք է պատճառաբանի:

Դիմողը գտնում է, որ եթե Քրեական դատավարության օրենսգրքի 414.3-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված» և «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը» նախադասությունների փոխարեն սահմանվեր, որ «Վճռաբեկ դատարանը պարտավոր է կայացնել պատճառաբանված որոշում», և «Վճռաբեկ դատարանը պարտավոր է հիմնավորել վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը», ապա Վճռաբեկ դատարանը պարտադրված կլիներ կատարելու Քրեական դատավարության օրենսգրքի՝ խնդրո առարկա 414.3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դիմողի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողի կողմից չեն ներկայացվել Քրեական դատավարության օրենսգրքի 414.3-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ բավարար այնպիսի հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը հակասությունը հանգեցրել է իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի կամ ազատության խախտման: Որպես հիմնավորում՝ դիմողն առավելապես ներկայացրել է այն, որ Վճռաբեկ դատարանն իր՝ 2021թ. հունվարի 26-ին կայացրած «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ, ըստ էության, **չի կատարել** Քրեական դատավարության օրենսգրքի 414.3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, **չի հիմնավորել** վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ հիշյալ օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

Այսինքն՝ ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց՝ դիմողն իրականում առաջ է քաշում դատարանի գործողությունների իրավաչափության հարց, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե դիմումում **առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:**

Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության **բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց**, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

Կարինե Առաքելյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝  
Անդամներ՝



Ա. Թունյան  
Ա. Վաղարշյան  
Է. Շաթիրյան

18 մարտի 2021 թվականի  
ՍԴԴԿՌ-17